

«ՇԱՀԵՆ ՔԱՎԱՖՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ԿՐԹԱՎՃԱՐ»

2026–2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՐԱՄԱՇՆՈՐՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

«Շահեն Քավաֆյան» հիշատակի կրթավճար ծրագրի շրջանակներում, Ստանբուլի հայերի մշակութային միության կողմից ուսման վարձերի համար մրցութային կարգով ֆինանսական աջակցություն է տրամադրում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողներին, որը կառավարվում է իրականացվում է «Փարոս» հիմնադրամի (ԱՄՆ) և «Դեպի Առաջ» բարեգործական ՀԿ համագործակցությամբ:

Մրցութային կարգը

- 1 2026–2027 ուսումնական տարվա դրամաշնորհի մեկնարկը նախատեսվում է 2026թ. սեպտեմբերից, իսկ դիմելու վերջնաժամկետն է 2026 թվականի սեպտեմբերի 30-ը:
- 2 Դրամաշնորհի հայտ կարող են ներկայացնել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի բակալավրիատի (սկսած բակալավրիատի երկրորդ տարվա) և մագիստրատուրայի. նվազագույն 13 ՄՈԳ ունեցող ուսանողները:
- 3 Ընտրությունը կանցկացվի մեկ փուլով և դրամաշնորհների տրամադրման վերաբերյալ վերջնական որոշումը կկայացվի դրամաշնորհի գնահատման հանձնաժողովի (ԴԳՀ) կողմից:
- 4 Մրցութային հաղթողների կրթավճարն կվճարվի անմիջապես ԲՈՒՀ-ի բանկային հաշվեհամարին՝ տեղեկացնելով բոլոր կողմերին:
- 5 Խնդրում ենք ամբողջական լրացված դիմումը և պահանջված բոլոր փաստաթղթերը, միավորված մեկ PDF փաստաթղթում, ուղարկել info@parosfoundation.org (առավելագույնը 20 Mb):
- 6 Ներկայացրած փաստաթղթերը վերադարձի ենթակա չեն:
- 7 Լրացուցիչ հարցերի և տեղեկությունների համար զանգահարել՝ 091-426120:
- 8 Թերի լրացված դիմումը և փաստաթղթերի թերի փաթեթը հանձնաժողովի կողմից քննարկման ենթակա չեն: Հանձնաժողովի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Պահանջվող փաստաթղթեր

- 1 Դիմում (կցված ձևաչափով լրացված հայտ):
- 2 Անձնագրի պատճեն
- 3 Նպատակի հիմնավորում՝ 1 համակարգչային էջի սահմաններում հակիրճ ներկայացնել Ձեր կենսագրությունը, Ձեր ունեցած հաջողությունները, ինչու եք ընտրել տվյալ մասնագիտությունը և ինչպես եք կիրառելու ստացված գիտելիքները ապագայում, նշել նաև քաղաքացիական գործունեության, գիտական աշխատանքներում ներգրավվածության մասին:
- 4 Եթե սովորում եք մագիստրատուրայում, բակալավրի աստիճանի դիպլոմի և դիպլոմի հավելվածի պատճեն:
- 5 ԲՈՒՀ-ի կողմից Տեղեկանք դիմորդի ուսանող լինելու, ուսման վճարի չափի եւ հավանական պարտքի վերաբերյալ, որտեղ նշված կլինի Ձեր մասնագիտությունը, գնահատականների միջինը՝ առաջին կուրսից մինչև նախորդ կիսամյակը ներառյալ և տարեկան ուսման վարձը՝ մեկ էջում ամփոփված: (ամփոփաթեթիկը պետք է ձեռք բերել ուսումնական հաստատության տնօրենից):
- 6 Տեղեկանք ծնող(ներ)ի աշխատավայրից, նրա(նց) պաշտոնի և աշխատավարձի չափի, աշխատանքային ժամանակահատվածի վերաբերյալ. նշելով աշխատավայրի հասցեն, գործատուի անունը, ազգանունը եւ հեռախոսահամարը:
- 7 Ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանք (առկայության դեպքում):
- 8 Աստղանիշով նշված կետերի համար հնարավոր է պահանջվել հիմնավորումներ:



Սույն դիմումի ձեւը հնարավոր է ներբեռնել հետեւյալ հասցեից՝

<https://parosfoundation.org/donations/komitas-conservatory-student-scholarships-2027-2028/>

The Paros Foundation, 2217 5th St., Berkeley, CA 94710. info@parosfoundation.org

«Շահեն Բավաճյանի հիշատակի կրթավճար» մրցույթի մասնակցության ԴԻՄՈՒՄ

2026–2027 ուսումնական տարվա համար

1. Անձնական տվյալներ

Անուն	Ազգանուն	Հայրանուն	Սեռ՝ ☐ Արական ☐ Իգական
Ծննդյան՝ Օր / ամիս / տարի	Ծննդավայրը (երկիր, մարզ, քաղաք/գյուղ)		Սոց. քարտի համարը
Քաղաքացիություն	Անձնագրի սերիան/համարը	Տրված	Ում կողմից
Ապրում եմ ծնող(ներ)ի հետ ☐ Այո ☐ Ոչ		Ապրում եմ առանձին ☐ Այո ☐ Ոչ	
Ամուսնացած եմ * ☐ Այո ☐ Ոչ	Ամուսնալուծված եմ * ☐ Այո ☐ Ոչ	Միայնակ հայր/մայր եմ * ☐ Այո ☐ Ոչ	
Անցել եմ գինվորական ծառայություն * ☐ Այո ☐ Ոչ	Մասնակցել եմ մարտական գործողություններին * ☐ Այո ☐ Ոչ		
Ունեմ հաշմանդամություն * ☐ Ոչ ☐ Այո, եթե այո, նշել կարգը			
Լեռնային Դարաբաղից բռնի տեղահանված եմ * ☐ Ոչ ☐ Այո եթե այո, նշել երբ			

2. Կոնտակտային տվյալներ

Գրանցման Հասցե՝	Երկիր/մարզ	Քաղաք/գյուղ	Փողոց	Տուն/բն.
Փաստացի բնակության Հասցե՝ (եթե նույնը չէ)	Երկիր/մարզ	Քաղաք/գյուղ	Փողոց	Տուն/բն.
Հեռ (բջջ)՝	Էլ. հասցե՝	Ցանկության դեպքում նշել ձեր որևէ սոցցանցի հղումը		

3. Ուսումնական տվյալներ

Ֆակուլտետը	Բաժինը	Մասնագիտությունը
Ուսման մեկնարկի տարին/ամիսը		Ուսման ավարտի տարին/ամիսը
☐ Բակալավրիատի ☐ Մագիստրատուրայի Առաջադիմության ՄՈԳ՝		

4. Կրթավճար

Դիմումը վերաբերում է 2026–27 ուս. տարվա	☐ 1-ին կիսամյակին	☐ 2-րդ կիսամյակին
Նշել պահանջվող գումարը համապատասխան դաշտում (ՀՀ դրամ)		
Եթե նախկինում «Փարոս» հիմնադրամի կողմից որևէ աջակցություն ստացել եք նշել՝ Ժամանակահատվածը Որքա՞ն ☐ Ոչ		
Եթե 2025–26 ուս. տարվա համար այլ ֆինանսական օգնություն ստացել եք նշել՝ որտեղի՞ց Ժամանակահատվածը Որքա՞ն ☐ Ոչ		
Եթե 2024–25 ուս. տարվա համար այլ ֆինանսական օգնություն ստացել եք նշել՝ որտեղի՞ց Ժամանակահատվածը Որքա՞ն ☐ Ոչ		



Սույն դիմումի ձեռք հնարավոր է ներբեռնել հետևյալ հասցեից՝

<https://parosfoundation.org/donations/komitas-conservatory-student-scholarships-2027-2028/>

The Paros Foundation, 2217 5th St., Berkeley, CA 94710. info@parosfoundation.org

5. Ընտանեկան և ֆինանսական տեղեկատվություն

Ընտանիքի ֆինանսական կարողությունների ամբողջական գնահատման համար խնդրում ենք պատասխանել հետևյալ հարցերին հնարավորինս ամբողջական և հստակ

Մայրը՝ Անուն, ազգանուն և տարիք	Հայրը՝ Անուն, ազգանուն և տարիք
Եթե ծնող(ներ)ը գործազուրկ է/են՝ նշել պատճառը և հանգամանքները. իսկ եթե աշխատում են, նշել եկամտի աղբյուրը և գումարի չափը	
Ծնող(ներ)ը ապրում են ☐ Միասին ☐ Առանձին	
Մահացած * ☐ Հայր ☐ Մայր	
Ծնող(ներ)ի խնամակալության տակ գտնվող(ներ)ի թիվը (այդ թվում և Դուք)	
Ծնող(ներ)ի խնամակալության տակ գտնվող(ներ)ի տարիքը և ազգակցական կապը *	
Արդյո՞ք ծնող(ներ)ը այս դրամաշնորհի ժամանակահատվածում ունենալու են որևէ ֆինանսական մասնակցություն կրթական ծախսերում: ☐ Ոչ ☐ Այո	
Եթե այո, որքան (ՀՀ դրամ).	
Արդյո՞ք այս դրամաշնորհի ժամանակահատվածում ծնողների հետ եք ապրում կամ ապրելու եք, թե ոչ: ☐ Այո ☐ Ոչ	
Եթե ոչ, պարզաբանել.	
Նշեք Ձեր բոլոր եկամուտները, չափը և աղբյուրը: Եթե ամուսնացած եք, ապա ընտանիքի ընդհանուր եկամուտը: Նշեք, եթե ունեք երեխա:	

6. Հավաստիացում և ստորագրություն

Ծանոթացա «Փարոս» հիմնադրամի մրցութային կարգին և համաձայն եմ մրցույթի պայմաններին: Խնդրում եմ ինձ ընդգրկել 2026-27 ուսումնական տարվա Կրթավճար ծրագրի մրցույթի մասնակիցների ցանկում: Ստորագրությունս վկայում է, որ իմ կողմից Դրամաշնորհի Գնահատման Հանձնաժողովին տրամադրված ողջ տեղեկատվությունը ինչպես նաև ներկայացված փաստաթղթերը իրական և ճշգրիտ են: Գիտակցում եմ, որ կրթավճարը շնորհվում է Դրամաշնորհի Գնահատման Հանձնաժողովի որոշմամբ և հանձնաժողովին տալիս եմ համաձայնությունս ճշտելու փաստաթղթերի իսկությունը:		
Դիմորդի անուն ազգանունը *	Դիմորդի ստորագրությունը *	Օր / ամիս / տարի *



Սույն դիմումի ձեռք հնարավոր է ներբեռնել հետևյալ հասցեից՝

<https://parosfoundation.org/donations/komitas-conservatory-student-scholarships-2027-2028/>

The Paros Foundation, 2217 5th St., Berkeley, CA 94710. info@parosfoundation.org